



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
 ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ
 ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
 ԿԱՏԱՐՈՂ Ա. ՄԱՋՄԱՆՅԱՆ
 17.06 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
 ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0103-21

Ձեռնարկողը՝

«ՆՈՐԳԵՈ» ՍՊԸ

ք. Երևան, Թումանյան 2-րդ փակուղի, տուն 7

Գործունեությունը՝ **Էմուլսիոն պայթուցիկ նյութերի ոչ պայթունավրանգ
 բաղադրիչների արտադրամասի շրջակա միջավայրի վրա
 ազդեցության գնահատման հաշվեկտրություն**
 Կոմպլեքսի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
 փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
 տնօրենի պաշտոնակատար՝



Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0103-21

<14> 06 2021թ.

Էմուլսիոն պայթուցիկ նյութերի ոչ պայթունավորանգ բաղադրիչների արտադրամասի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս.

Ձեռնարկող՝ «ՆՈՐԳԵՈ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/, /Ա կատեգորիա/
Տեղադրման վայրը՝ Կոտայքի մարզ, Կապուտան համայնք

«ՆՈՐԳԵՈ» ՍՊԸ ընկերությունը իր սեփական տարածքում, որը գնտվում է Կոտայքի մարզի Ակունք համայնքի Կապուտան գյուղի՝ 2-րդ փող. թիվ 19/1 հասցեում, նախատեսում է կազմակերպել պայթուցիկ նյութի ոչ պայթուցիկ էմուլսիոն արգասիքի (կիսաֆաբրիկատ) արտադրություն:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 3)-րդ կետի դ. ենթակետի, ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նկարագրական մաս.

«Նորգեո» ՍՊԸ գործարանը գտնվում է Կոտայքի մարզի Ակունք համայնքի Կապուտան գյուղում, բնակելի տներից 560մ հեռավորության վրա:

Տեղանքի ռելիեֆը հանգիստ է: Բարձրությունների տարբերությունները 1կմ հեռավորության վրա չեն գերազանցում 50 մ, այդ պատճառով տեղանքի ռելիեֆի գործակիցը ընդունված է 1:

Արտադրամասի արտհրապարակի կոորդինատներն են.

X՝ 8473462.2, Y՝ 4466825.3, Z՝ 1690:

Գեոմորֆոլոգիական տեսակետից, ուսումնասիրվող տարածքը տեղադրված է Հատիս լեռան, հյուսիս-արևմտյան ճյուղավորությունների լանջերին: Տեղամասը համահարթեցվել է 70-ական թվականներին, որտեղ դեռևս առկա են հին կիսաքանդ շինությունների հետքեր, մասամբ ճեղքավորված, քայքայված ասֆալտով: Նշված հարթակում բացարձակ նիշերը տատանվում են 1686.0-ից մինչև 1694.0 մետրի սահմաններում:



